ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԳՆԱՑ և ԹԵԹԼ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/70

«30» 06 2021թ.

ք. Երևան

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս Վ. Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ամենագնաց և թեթև բեռնատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել

Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1, N 1/1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2. 4. 6 պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և

պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5 360 000 (հինգ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

4.3 Սույն պայմանագրի 2. 4. 5 և 2. 4. 6 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա << կառավարության 01. 04. 2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կատարողին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա

եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ

հանդիսացող անձի տվյալները փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1/1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8 ՀՀ ֆՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011001352 ՀՎՀՀ 00153247 Գլխավոր քարտուղար ----------/Վ.Օհանյան (ստորագրություն) Կ.Տ.	«Մ-Բի-Ռ» ՍՊԸ Հասցե ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4 Բանկ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Հ/Հ 220083335012000 ՀՎՀՀ 08417829 Տնօրեն ----------Վ.Բաղդասարյան (ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«30» 06 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/70 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50111130/502	Տես Հավելված 1.1	դրամ		1	ՀՀ քաղաք Երևան Դավթաշեն 4,Ա.Միկոյան 109/8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2021թ

Հավելված 1.1 կից Excel ֆայլով

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար

----------, Վ.Օհանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
Հասցե ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4
Բանկ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Տնօրեն

----------Վ.Բաղդասարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

403	Ջրի բաքի հիմնանորոգում (զոդում, միջնապատերի տեղադրում, ներկում, փտած հատվածի փոխարինում)	հատ	375000
404	Փրփուրի բաքի նորոգում	հատ	67200
405	ՀՄ պոմպակայանի ջրի խողովակի հանում, տեղադրում կամ փոխարինում	հատ	2500
406	ՀՄ պոմպակայանի ջրի փականի հանում, տեղադրում կամ փոխարինում	հատ	4750
407	ՀՄ ջրատարերի միացումների խցուկի փոխարինում	հատ	300
408	ՀՄ տվիչի հանում, տեղադրում կամ փոխարինում	հատ	2900
409	ՀՄ փոխանցող ռեդուկտորի հանում, տեղադրում կամ փոխարինում	հատ	12000
410	ՀՄ փոխանցող ռեդուկտորի վերանորոգում	հատ	21500
411	Էլեկտրական համակարգի շղթայի խափանման (կարճ միացում/կտրվածք) 1 միավորի հայտնաբերում և նորոգում	հատ	5000
412	Հատուկ մասի հիդրավլիկ համակարգի նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	82500
413	Ջրի բաքի նորոգում (զոդում)	հատ	84000
414	Ջրի բաքի նորոգում (միջնապատերի տեղադրում)	հատ	112000
415	Ջրի բաքի նորոգում (ներկում)	հատ	56000
416	Ջրի բաքի նորոգում (փտած հատվածի փոխարինում)	հատ	150000
	13.Այլ ծառայություններ		
417	Ավտոմեքենայի թափքի հղկում - ներկում *գին 1 սմ2-ի համար*	հատ	6000
418	Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում *գին 1 կտորի համար*	հատ	10000
419	Եռակցման աշխատանքներ *գին 1սմ (գծ մ) համար*	հատ	2000
420	Խառատային աշխատանքներ *գին 1 կտորի համար*	հատ	4500
421	Փականագործական աշխատանքներ *գին 1 ժամ աշխատանքի համար*	հատ	8000
422	Ավտոմեքենայի լվացում	հատ	4000
423	Ավտոմեքենայի շարժիչի լվացում	հատ	7500
424	Առջ-ի կամ հետ-ի անվաբացքի կարգավորում	հատ	8000
425	Կոնդիցիոների լիցքավորում	հատ	25000
426	Կոնդիցիոների յուղի ավելացում	հատ	3000
427	Անիվի հանում - տեղադրում	հատ	600
428	Անվահեցի նորոգում 1 հատ	հատ	10000
429	Անվադողի վերանորոգում	հատ	1000
430	Անիվի բալանսավորում	հատ	1000
431	Ավտոմեքենայի հագոցի փոխարինում	հատ	7000
432	Ավտոմեքենայի հագոցատակի փոխարինում	հատ	3500
433	Ավտոմեքենայի կողային ապակու փոխարինում	հատ	5500
434	Ավտոմեքենայի հետ-ի ապակու փոխարինում	հատ	15000
435	Ավտոմեքենայի հետ-ի կողային ապակու փոխարինում	հատ	5500
436	Ավտոմեքենայի հետ-ի շարժական կողային ապակու փոխարինում	հատ	3500
437	Ավտոմեքենայի դռան փոխարինում	հատ	8000
438	Մասնագետի ծառայություն	հատ	5000
439	Քարշակման ծառայություն /1 կմ/	կմ	400

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8
ՀՀ ՖԵՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀ 900011001352
ՀԱՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար

_____/Վ.Օհանյան
(մտորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
Հասցե ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4
Բանկ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Տնօրեն

_____Վ.Բաղդասարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«30» 06 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/70 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

N	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիր	Առավելագույն գումարը
1	FORD Transit 350, OPEL Vivaro, IVECO Daily, MERCEDESS Sprinter; CHEVROLETC3500 ԳԾՊԾ, NISSAN Urvan, Volkswagen Transporter ավտոմեքենաների ընթացիկ նորոգում	Համաձայն գործարանային նորոգման և շահագործման ուղեցույցների և ձեռնարկների (Հավելվածներ 1-1-ից 1-6)	5 360 000
	Toyota Land cruiser 100-200; Nissan Patrol; Toyota Hilux ավտոմեքենաների ընթացիկ նորոգում		
	ԳԱԶել բոլոր տեսակների ավտոմեքենաների ընթացիկ նորոգում		

Մասնակցի առաջարկած գին՝ 32 900 000 ՀՀ դրամ

*Ծառայությունները մատուցվում են Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման՝ ԱԻՆ ԹՆԱ վարչության կողմից տրամադրված հայտերի և Կատարողի կողմից ներկայացված արատավորման ակտերի հիման վրա՝ ԱԻՆ ԹՆԱ վարչության կողմից հաստատվելուց հետո, **առավելագույնը 20 օրյա ժամկետում**:

1. Կատարողի կողմից տրվում է 6 ամիս կամ 10000կմ երաշխիք փոխարինված դետալների և ծառայության համար: Հիմնական նորոգում անցած հանգույցի շահագործման երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս կամ 20000 կմ:

2. Վերանորոգման ենթակա ավտոմեքենաների քարշարկումն իրականացնում է Կատարողը՝ համապատասխան տրանսպորտային միջոցներով, ապահովելով տեղափոխման անվտանգության պայմանները: Կատարողը պարտավոր է ապահովել տեխնիկայի անվտանգությունը և պահպանումը վերանորոգման ողջ ընթացքում:

3. Վերանորոգման ենթակա ավտոմեքենաների քարշարկումն իրականացնում է Կատարողը՝ համապատասխան տրանսպորտային միջոցներով, ապահովելով տեղափոխման անվտանգության պայմանները: Կատարողը պարտավոր է ապահովել տեխնիկայի անվտանգությունը և պահպանումը վերանորոգման ողջ ընթացքում:

4. Վերանորոգման ողջ ընթացքում պատվիրատուի ներկայացուցիչն իրավունք ունի հետևել կատարվող աշխատանքների որակին և համապատասխանությանը արտադրող գործարանի պայմաններին:

5. Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 3 տեխսպասարկման կետ՝ հագեցված ավտոմեքենաների վերանորոգման համար նախատեսված տեխնիկական միջոցներով և առնվազն 10 մասնագետ՝ ներգրավված մեքենաների սպասարկման ու նորոգման աշխատանքներում, ինչպես նաև շարժական ավտոտեխսպասարկում՝ համապատասխան սարքերով ու գերծիքներով հագեցված հատուկ ավտոտրանսպերտային միջոց:

6. Ծառայության մատուցման ընթացքում օգտագործվող՝ շարժիչների և փոխանցման տուփերի յուղերը կարող են տրամադրվել պատվիրատուի կողմից, իսկ բոլոր տեսակի պահեստամասերի, քսայուղերի, ներկերի և այլ նյութերի ապահովումն իրականացվում է կատարողի կողմից:

7. Առանձին դեպքերում կատարողը նորոգման աշխատանքներն իրականացնում է Պատվիրատուի կողմից տրանսմադրված համապատասխան պահեստամասերով:

8. Վերանորոգման ժամանակ փոխված հիմնական ագրեգատները Կատարողը պարտավոր է վերադարձնել պատասխանատու ստորաբաժանմանը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011001352 ՀՎՀՀ 00153247 Գլխավոր քարտուղար	«Մ-Բի-Ռ» ՍՊԸ Հասցե ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4 Բանկ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Հ/Հ 220083335012000 ՀՎՀՀ 08417829 Տնօրեն
---------- Վ.Օհանյան (ստորագրություն) Կ.Տ.	---------- Վ.Բաղդասարյան (ստորագրություն) Կ.Տ.

ավելված N
«30» 06 20[illegible]թ. կնքվա
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/70 ծածկագրով պայմանագ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

դրա

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
								հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	50111130/502	ամենագնաց և թեթև բեռնատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ						... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	

Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվո և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դր անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար

Կ.Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
Հասցե ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4
Բանկ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Տնօրեն

Վ.Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«30» 06 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/70 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«30» 06 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/70 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹԵԹԵՎ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 30.06.2021թ. N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/70 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, այսուհետ՝ «Կողմեր», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հիմք ընդունելով 30.06.2021թ. թիվ ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/70 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը՝ Կողմերը համաձայնվեցին պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Պայմանագրի 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 3 179 438 (երեք միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր երեսունութ) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը»:

1.2 Հաստատել Պայմանագրի հավելված 2-ով սահմանված Վճարման ժամանակացույցը:

2.Պայմանագրի մյուս բոլոր կետերով Կողմերի պարտավորությունները մնում են անփոփոխ:

3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագրի երկկողմ ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

4. Համաձայնագիրը համարվում է պայմանագրի անքակտելի մասը, կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011001352 ՀՎՀՀ 00153247 Գլխավոր քարտուղար՝ _______ Վ. Օհանյան (ստորագրություն) Կ.Տ	«Մ-Բի-Ռ » ՍՊԸ Ք.Երևան ,Մյասնիկյան 22/4 «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Հ/Հ 220083335012000 ՀՎՀՀ 08417829 _______ Վ.Բաղդասարյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
«30» «06» 2021թ. կնքված
« ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/70» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/502	Հրշեջ ավտոմեքենաների և ավտոբուսների վերանորոգման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	2384570	2384570	3179438	3179438	3179438	3179438

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան
փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝
Վ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-Բի-Ռ » ՍՊԸ
Ք.Երևան ,Մյասնիկյան 22/4
«Ակվա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220088335012000
ՀՎՀՀ 08417829
Վ.Բարդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ